ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅԿՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԸՆՏԱՆԻՔԻ ԹԵՄԱՅԻ ԱՐՁԱՐՁՈՒՄԸ ԺԹ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ ԵՒ Ի. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐՈՒՄ

1512 թ.՝ Հակոբ Մեղապարտի կողմից առաջին հայերեն գրքի տպագրությունից միայն 260 տարի անց, հնարավոր եղավ հայկական հողի վրա գիրք հրատարակել։ Այդ ընթացքում տարբեր հայ գործիչներ հայրենիքում տպարան հիմնելու փորձեր են կատարել, սակայն այդ փորձերն ու մտադրություններն անարդյունք են մնացել՝ առաջին հերթին պայմանավորված Հայաստանի անկայուն քաղաքական դրությամբ։

Հայրենիքում տպարան ստեղծելու ուղղությամբ կատարված ձեռնարկումները հաջողություն ունեցան միայն Սիմեոն Ա. Երեւանցու (1763–1780) կաթողիկոսության շրջանում։ 1771 թ. Մայր Աթոռի միաբանների ուժերով սկսեց գործել էջմիածնի տպարանը, որը կոչվում էր Գրիգոր Լուսավորչի անունով։ Նշենք, որ գրաշարները, սրբագրիչները, տպագրողները նույն վանականներն էին։ 1772 թ. նորաստեղծ տպարանում լույս տեսավ Հայաստանի տարածքում հրատարակված առաջին գիրքը՝ Սիմեոն Երեւանցու «Զբոսարան հոգեւոր» վերնագրով աղոթագիրքը[1]։

Արեւելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրությանը միացվելուց հետո գրատպության զարգացման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեցին։ 1830-ականներից նոր շունչ ստացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը։

Եթե իր գործունեության սկզբից ի վեր Մայր Աթոռի տպարանը, հասկանալի պատճառներով, տպագրում էր բացառապես իր պահանջների

---

[1] *Մանրամասն տե՛ս* Վ. ԴԵՒՐԻԿՅԱՆ, *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Գ., Երեւան, 2016, էջ 288։*

համար անհրաժեշտ տարբեր կրոնական-ծիսական գրքեր, ապա Ի. դարի վերջերին տեսնում ենք, որ նույն տպարանում հրատարակվում էր նաեւ օտարալեզու գրականություն։ Այս հանգամանքը բացատրվում էր արագատիպ տպագրական մեքենա ունենալու իրողությամբ, որի շնորհիվ հնարավոր էր առավել մեծ քանակությամբ գրքեր տպագրել։ 1886 թ. հունիսին Ս. էջմիածին այցելած բժիշկ Միսաք Արամյանցը գրում է. «Տպարանը՝ իւր նիւթական վիճակի կողմից լաւ տպաւորութիւն է գործում այցելուի վերայ։ Դրա ճոխութիւնը եւ հարստութիւնը տեսնելով, ակամայ երախտագիտութեամբ յիշում էք մեծ. Մ. Սանասարեանցին, Յ. Ս. Անանեանցին, որոնց պարտական է Մայր Աթոռը իւր ծաղկեալ տպարանով»[2]։ Չպետք է մոռանալ, որ այդ շրջանում հայկական գրեթե բոլոր տպարանները ձգտում էին հետեւել գրահրատարակչության բնագավառում առաջատար դիրք զբաղեցնող Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանի օրինակին, որը կարողանում էր այդ գործից ֆինանսական օգուտ ստանալ։

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ հասկանալի է դառնում, թե ինչու, 1870-ականներից սկսած, Մայր Աթոռի տպարանում հրատարակված գրքերի շարքում կրոնական բնույթի հրատարակությունների կողքին սկսեցին նկատելի քանակ կազմել գիտական եւ գեղարվեստական գրքերը (հատկապես՝ թարգմանությունները)։ Այսպիսի հրատարակություններն առանձնապես մեծ թիվ կազմեցին Մկրտիչ Ա. Խրիմյանի կաթողիկոսության շրջանում (1892–1907)։ Դրանցից որոշներն «Արարատ» ամսագրից կատարված արտատպություններ էին։ ԺԹ. դարի վերջին քառորդում եւ Ի. դարասկզբին Ս. էջմիածնում հրատարակված գրքերի բովանդակային քննությունից տեսնում ենք, որ ընտանիքի խնդիրը համեմատաբար շատ արծարծվող թեմաներից էր։

ԺԹ. դարի վերջին քառորդում Մայր Աթոռի հրատարակած գրքերից առաջինն ընտանիքի խնդրին անդրադարձ կա ճանաչված հայագետ, թարգմանիչ Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) հեղինակությամբ 1875 թ. հրատարակված «Դասագիրք քրիստոնէական վարդապետութեան» գրքի առաջին մասում[3]։ Գրքի հիմնական բովանդակությունն այն

[2] Մ. Արամեանց, *Սալիանից էջմիածին. Նկարագիր ուխտաւոր ուղեւորութեան, Թիֆլիս, 1887։*

[3] Գ. Այվազեան, *Դասագիրք քրիստոնէական վարդապետութեան ըստ ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1875։*

է, որ մարդը պետք է ձգտի հնարավորինս մոտ լինել Աստծուն, կատարի Ավետարանի բոլոր պատվիրանները, լինի տեղեկացված քրիստոնեական Եկեղեցու մասին, զերծ մնա մեղքերից։ Գրքի վերջին՝ «Կարգ քահանութեան եւ Պսակ» վերնագրված բաժնում հեղինակն անդրադարձ է կատարել Սուրբ պսակին, որով սկիզբ է դրվում քրիստոնեական ընտանիքին։ Ի պատասխան «Պսակն ինչ է» հարցին՝ հեղինակը սովորողներին, հավատացյալ ընթերցողներին բացատրում է, որ այն Հայ Եկեղեցու մի խորհուրդ է, որով օրհնվում է տղամարդու եւ կնոջ ամուսնությունը, եւ նրանք իրենց զավակներին քրիստոնյային վայել կերպով կրթելու եւ դաստիարակելու շնորհ են ստանում[4]։

1885 թ. Մայր Աթոռի տպարանում հրատարակած «Համառօտ բարոյագիտութիւն» գրքում Սերովբե եպս. Արարատյանը խնդիր էր դրել մանուկներին բարոյագիտության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ հաղորդել։ Նա աշխատանքում կարեւոր տեղ է հատկացնում ծնողական եւ որդիական սիրուն։ Որդիները թե՛ մանուկ, թե՛ հասուն տարիքում պետք է պատվեն եւ հարգեն իրենց ծնողներին, եւ այդ ամենը պետք է արտահայտվի ծնողների հանդեպ ունեցած սիրով։ Սակայն այդ սերը չպետք է գերազանցի աստվածային սիրուն։ Հեղինակը մանուկներին կոչ է անում հոգատար լինել հատկապես մեծահասակ ծնողների նկատմամբ, քանի որ ծերության շրջանում նրանք սիրո եւ հոգատարության առավել մեծ կարիք են զգում[5]։

Հայ իրականության մեջ ընտանեկան հարաբերությունների, ընտանիքի ավագ եւ կրտսեր անդամների միջեւ հարաբերությունների ուսուցողական բնույթի աշխատություններից մեկը, իրավամբ, Խրիմյան Հայրիկի «Պապիկ եւ թոռնիկ» ստեղծագործությունն է, որը տարբեր սերունդների համար դաստիարակչական նշանակություն է ունեցել՝ մի քանի հրատարակություն ունենալով, այդ թվում՝ Մայր Աթոռում 1894 թ.։ Գրքում հովվերգական գույներով պատկերավոր նկարագրված են Վասպուրականի գյուղական իրականությունը, կենցաղը, ավանդույթները, ինչպես նաեւ բնությունը։ Պապիկը, որ թոռնիկին տեսնում է որպես իր օջախի ժառանգ, խրատներ ու դասեր է տալիս նրան, որով էլ երեւում են այդ ժամանակների առօրյա խնդիրները։ Այս երկով Խրիմյան Հայրիկը հայությանը պատգամում է վառ պահել տան ճրագը, սիրել հայրենի հողը,

---

[4] *Անդ, էջ 93։*

[5] Ս. Արարատեան, *Համառօտ բարոյագիտութիւն, Վաղարշապատ, 1885, էջ 141–142։*

անմնացորդ նվիրվել հայրենիքին եւ երբեք չլքել այն։ Երկը պարունակում է ժողովրդական իմաստուն մտքեր, խոհեր՝ ժամանակի, կյանքի եւ աշխարհի մասին, ինչն արդիական է բոլոր ժամանակներում. «Այսպէս, աշխարհիս վերայ ամեն կարգի եւ աստիճանի մարդիկ թէ՛ առաւել, թէ՛ նուազ քրտինք թափելու դատապարտուած են, որով Աստուածային սահմանուած վճիռը անվրէպ կը տարածուի բոլոր մարդկութեան վերայ»[6]։

Նույն՝ 1894 թ. Մայր Աթոռի տպարանում հրատարակվել է նաեւ շոտլանդացի գրող Սմայլս Սամուելի «Ինչպես պետք է ապրել բաղդաւոր լինելու համար» գրքույկը։ Աշխատանքում թվարկվում են այն հանգամանքները, որոնք կարող են անհատին երջանիկ դարձնել. բնավորությունը, ընկերասիրությունը, աշխատանքը, քաջությունը, ինքնազսպումը, գրականության նկատմամբ սերը, ապրելու արվեստը եւ այլն։ Ըստ հեղինակի՝ մարդուն երջանիկ դարձնում է նաեւ ընտանիքը, այն ընտանիքը, որտեղ կա սեր, համերաշխություն։ «Ընտանիքն առաջին եւ ամենագլխաւոր դպրոցն է, որտեղ կազմակերպւում է մարդու բնաւորութիւնը։ Ընտանիքի մեջ է ստանում մարդն իր առաջին բարոյական կրթութիւնը։ Նորա մէջից է քաղում իր ամբողջ կեանքի համար վարուելու կանոնները...»,— համոզմունք է հայտնում նա[7]։ Ըստ այդմ՝ մարդու կյանքում երջանկության գլխավոր նախապայմաններից մեկը համարում է ընտանիքը։

Սմայլս Սամուելի աշխատանքի բովանդակությանը համահունչ է ռուս նշանավոր գրող Լեւ Տոլստոյի «Ինչ է երջանկութիւնը» գրքույկը, որը նախապես հայերենով տպագրվել էր «Արարատ» ամսագրում[8]։ Գործում հեղինակը փորձում է պատասխանել հավերժական թվացող հարցադրումների. ինչ է երջանկությունը, որո՞նք են նրա «բաղադրատարրերը», եւ երջանիկ լինելու համար ինչ է անհրաժեշտ մարդուն։ Տոլստոյի կարծիքով՝ որեւէ անհատ իր կյանքի պայմաններից գոհ չէ։ Նա երջանկության համար անհրաժեշտ 5 պայման է թվարկում.

ա. Ազատությունը՝ բնությանը մոտ լինելու պայմանով,

բ. Սիրելի աշխատանքը (ցանկալի է՝ ֆիզիկական, «որ ախորժակ է բաց անում եւ հանգստացնող քուն բերում»),

---

[6] Խրիմեան Հայրիկ, *Պապիկ եւ թոռնիկ։ Գիւղական ժողովրդի թոռնիկներու համար, Վաղարշապատ, 1894, էջ 3։*

[7] Ս. Սմայլս, *Ինչպես պետք է ապրել բաղդաւոր լինելու համար, Վաղարշապատ, 1894, էջ 3։*

[8] Լ. Տոլստոյ, *Ինչ է երջանկութիւնը, «Արարատ», Վաղարշապատ, 1900, թիւ Ե., մայիս, էջ 233–238։*

գ. Ընտանիքը։ Հեղինակի համոզմամբ՝ մարդիկ որքան մեծ աշխարհիկ հաջողությունների են հասնում, այնքան ավելի հեռանում են այս երջանկությունից։ Կարծում ենք, սա հեղինակի անհատական կարծիքն է, եւ միշտ չէ, որ իրականությունն է արտացոլում։ Նա առանձնապես քննադատական խոսքեր է ուղղում այն անհատներին, որոնք գիտակցաբար հրաժարվում են ընտանիքի տված ուրախությունից, իսկ երեխաներին ընկալում իբրեւ բեռ՝ անմիջականորեն նրանց դաստիարակությամբ զբաղվելու փոխարեն այդ պարտականությունը հանձնելով օտար (մանավանդ՝ օտարազգի) անձանց։

դ. Այլ մարդկանց հանդեպ սիրալիր վերաբերմունքը։

ե. Առողջությունը եւ առանց հիվանդությունների մահը[9]։

Տոլստոյի գործում կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ հասարակական աստիճանակարգության մեջ առավել բարձր դիրք զբաղեցնող, գյուղից հեռացած եւ «հոտած քաղաքում» հանգրվանած անձինք բախտավորության այս կետերում առավել աննպաստ դիրքերում են գտնվում։ Հեղինակի համոզմամբ՝ երջանկության անհրաժեշտ պայմանն աշխատանքն է, այլ ոչ թե ծուլությունը, անգործությունը, եւ կոչ է անում մոռանալ «մեր վայրենի նախապաշարմունքը, թէ չաշխատող հարուստը բաղդաւոր է»[10]։ Այն է՝ Տոլստոյը երջանկության կարեւոր գրավական է համարում արդար աշխատանքը, դրան զուգընթաց՝ ոչ թե աշխարհիկ, այլ առավելապես հոգեւոր կրթությանը հետեւելը։

Հասկանալի պատճառներով (արագ փոփոխվող բարքեր, նոր գաղափարական հոսանքներ, եւն) ընտանիքի թեման առավել լայնորեն արծարծված է Մայր Աթոռի տպագրած քարոզգրքերում, որոնք նախատեսված էին «ժողովրդական ընթերցանության համար»։ Այդպիսի հրատարակություններից է էմմանուել քհն. Նազարյանցի «Պարզ քարոզներ»-ի երրորդ գրքույկը։ Ամուսնությանը նվիրված քարոզում հեղինակն անդրադարձել է մարդու կյանքում ամուսնաընտանեկան հարաբերությունների կարեւորությանը. «Շատ անցքեր գալիս են ու անցնում մարդուս կեանքում, նրա գլխով, բայց նրանց մէջ նշանաւորը՝ երկուսը մէկ լինելու շրջանն է, ամուսնութիւնն է։ Ամուսնութիւնը աշխարհումս այնքան

---

[9] Լ. Տոլստոյ, *Ինչ է երջանկութիւնը, Վաղարշապատ, 1900, էջ 13։ Երկու տարի անց գիրքն ունեցել է նաեւ երկրորդ հրատարակություն, որը ոչնչով չի տարբերվում առաջինից։*

[10] *Անդ, էջ 22։*

հարկաւոր բան է, որ Աստուծոյ գործերի մէջ երկրորդ տեղն է բռնում»[11]։ Նա հատուկ ընդգծում է, որ Ադամին ստեղծելուց հետո Աստված մտածեց նաեւ նրան ամուսնացնելու մասին։ Պատկերավոր արձանագրում է հանրության մտածողության մեջ հաստատված այն ճշմարտությունը, որ անհատի համար ամենամեծ ուրախությունը զավակներով շրջապատված ընտանիքն է, որի մեջ թագավորի ու թագուհու նման բազմած են հայրն ու մայրը՝ տան երկու սյուները[12]։ Հենց սա է ավանդական, նահապետական ընտանիքը, որի քայքայումը կանխելուն էին ուղղված ժամանակի հայ հոգեւոր եւ աշխարհիկ բազմաթիվ գործիչների ջանքերը։ Ամուր եւ կայուն ամուսնություն եւ ընտանիք ունենալու համար, ըստ հեղինակի, կարեւոր նախապայման է, որ ամուսինը եւ կինը միմյանց կապված լինեն սիրով, որը կլինի զուտ սեր, հոգեւոր սեր, սեր, որն Աստծուց կգա եւ կվերջանա Աստծով[13]։ Այնուհետեւ անդրադառնալով ծնողական դաստիարակությանը՝ նա ընդգծում է. «Ամուսնական կեանքը շատ պարտքեր է դնում մարդուս վրայ։ Բայց նրանց մէջ գլխաւորն է որդիք կրթելու եւ դաստիարակելու պարտքը, որովհետեւ մեծացնելով լաւ որդիք, մարդս տալիս է հասարակութեանը լաւ անդամներ, ազգին ու եկեղեցուն՝ լաւ զաւակներ»[14]։

Ընտանիքի խնդրին անդրադարձներ կան Մակար եպս. Բարխուդարյանցի «Մատչելի քարոզներ»-ի հրատարակված տետրակներում։ Մասնավորապես Ա. տետրակի քարոզներից մեկում ընդգծելով, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու խորհուրդներից մեկն ամուսնությունն է՝ հեղինակը հիշեցնում է, որ պատվական է համարվում այն ամուսնությունը, երբ հարսն ու փեսան չափահաս են, խելամտորեն են միմյանց ընտրում, եւ նրանց միությանը արգելք հանդիսացող հանգամանքներ (չհասական արգելքներ, ազգապղծություն եւ այլն) չկան։ Ընդունելի էր համարվում այն ամուսնությունը, երբ հարսն ու փեսան մինչեւ ամուսնությունն իրենց «կոյս եւ սուրբ են պահում», իսկ ամուսնանալուց հետո հավատարիմ մնում պսակադրության ժամանակ կատարած ուխտին։ Ընդգծվում էր, որ նման ամուսինները պատիվ են բերում իրենց ազգին ու եկեղեցուն[15]։ Բարխուդարյանցը պարսավանքի խոսքեր է ուղղում

---

[11] Է. ՆԱԶԱՐԵԱՆՑ, *Պարզ քարոզներ, գք. 3, Վաղարշապատ, 1897, էջ 1։*
[12] *Անդ, էջ 11։*
[13] *Անդ, էջ 33։*
[14] *Անդ, էջ 38։*
[15] Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, *Մատչելի քարոզներ, տետրակ Ա., Վաղարշապատ, 1900, էջ 25–26։*

ժամանակի սովորույթներին (իր խոսքով՝ «մօդային») հետեւողներին։ «Բայց մօդան, անիծեալ մօդան, երբ մուտք գործեց հայ սրբասէր գերդաստանների մէջ, հալածեց Աստուծոյ երկիւղը եւ խախտեց հաւատարմութեան ս. ուխտը, խլեց հայ գերդաստանների ծոցից ազգային պատուաբեր սովորութիւնները եւ ներմուծեց անպատուաբեր սովորութիւններ»,— գրում է նա[16]։ Ժամանակի «մօդա»-ն եւ նրա առաջ բերած խնդիրների վերաբերյալ քննարկումներն արդիական թեմա էին այդ շրջանում։ 1880 թ. իր «Մօդա» երկում այս խնդրին անդրադարձել է նաեւ արեւելահայ հայտնի հրատարակիչներից ու գրական գործիչներից Էմին Տեր-Գրիգորյանը[17]։

Բարխուդարյանցը «մօդա»-ի կործանարարության օրինակ է համարում այն, որ հայության միջավայրում մեծ թիվ են կազմում (իր խոսքերով՝ «հազարաւոր») չպսակված 50 տարեկան տղաները եւ 40 տարեկան օրիորդները։ Այնուհետեւ համոզմունք է հայտնում, թե մեր հանգուցյալ պապերն ու տատերը գերեզմաններից ելնելու դեպքում անպայման կնախատեին մեզ՝ ամուսնական սովորույթները սրբությամբ չպահպանելու եւ անխաթար կերպով հաջորդ սերունդներին չփոխանցելու համար[18]։ Այս խոսքերն արդիական են բոլոր ժամանակներում, այդ թվում՝ մեր օրերում։

Բարխուդարյանցի քարոզներում խոսվում է նաեւ ընտանեկան խաղաղության, որդիական սիրո, ծնողական դաստիարակության, կնոջ հնազանդության, ընտանիքի մեծերին՝ տատիկներին եւ պապիկներին հարգելու եւ պատվելու մասին։ Կարեւորվում են ընտանիքի դերը, ծնողական դաստիարակությունը եւ ընտանեկան համերաշխությունը։ Աշխատության մեջ աստվածաշնչյան քարոզներ են առ ընթերցող, որոնք ընտանիքը, նրա անդամներին սիրելու եւ պատվելու հորդորներ են պարունակում[19]։

1901 թ. Մայր Աթոռի տպարանում հրատարակվել է նաեւ հոգեւոր քարոզներ պարունակող մեկ այլ գրքույկ՝ Արսեն քահանա Տեր-Հովակիմյան-Բագրատունու «Հոգեւոր ընթրիք. քրիստոնեայ ընտանիքների համար» ժողովածուն։ Այն հրատարակության էր պատրաստել նրա

---

[16] *Անդ, էջ 30։*

[17] Է. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, *Մօդա։ Կոմեդիա-վոդեվիլ մէկ արարուածով, Երեւան, 1880։ Մեծ պահանջարկ վայելող սույն գրքույկը Երեւանում վերահրատարակվել է նաեւ 1894 թ.։*

[18] Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, *Նշ. աշխ., տետրակ Ա., էջ 31։*

[19] Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, *Մատչելի քարոզներ, տետրակ Բ., Վաղարշապատ, 1901, էջ 11։*

որդին՝ Մուշեղ Բագրատունին։ Մայր Աթոռի դիվանը գրքի տպագրությունը թույլատրել է 1898 թ. հոկտեմբերի 15-ին (քննությունը հանձնվել էր Հուսիկ վարդապետ Մովսիսյանին)։ Թիֆլիսի գրաքննական կոմիտեն այն հրատարակության է թույլատրել 1901 թ. մայիսի 5-ին։ Ժողովածուում հրատարակված քարոզներից մեկը վերաբերում է ծնողական սիրո հարցին, ծնողներին պատվելու՝ զավակների պարտականությանը։ Քարոզի հիմնական ասելիքը կարծես ամփոփված լինի հեղինակի հետեւյալ սեղմ տողերում. «Եթէ մենք պարտաւոր ենք Աստուծուն սիրել ու յարգել, որովհետեւ Նա ստեղծել է երկինք ու երկիրը եւ մեզ խնամում է, ուրեմն պարտավոր ենք մեր ծնողներին էլ սիրել ու յարգել, ըստ որում նոքա են մեզ աշխարհք բերել, նոքա են մեզ կեանք տուել եւ նոքա են մեր կենաց պատճառ եղել, խնամել են մեզ եւ պահպանել ամեն պատահարներից»[20]։

Բացի վերը նշվածներից՝ ընտանիքի թեման արծարծվում է նաեւ Մայր Աթոռի տպարանում հրատարակված մի շարք այլ գրքերում եւս։ Ընդամենը մի քանի օրինակներ ներկայացնենք։ Այսպես՝ Զոկկեի «Կրօնական-բարոյական խորհրդածութիւններ» գրքում, ի շարս այլ հարցերի՝ անդրադարձ է կատարված ընտանիքին, ընտանեկան սիրուն եւ համերաշխությանը, որը համարվում է մարդու բախտավոր լինելու գլխավոր նախապայմաններից մեկը։ Ըստ նրա՝ գոհ լինելով ընտանիքի անդամներից, նրանցից ավելին չպահանջելով՝ անհատը կարող է գտնել իր բախտավորությունը[21]։ Կամ էլ ֆրանսիացի փիլիսոփա, բանաստեղծ Ժան-Մարի Գյույոյի «Դաստիարակութիւն եւ ժառանգականութիւն» գործում ընդգծվում էր, որ, բացի ընտանիքի ազդեցությունից՝ ծնողների դաստիարակությունից, անհատի վրա կարող են մեծ ազդեցություն ունենալ արտաքին շրջապատը, դպրոցը, բարձրագույն կրթությունը, որոնք մարդուն կարող են տանել ճիշտ կամ սխալ ուղով[22]։ Ըստ այդմ՝ հեղինակը հատուկ կարեւորում է ընտանիքում երեխաների համակողմանի դաստիարակությունը, ինչն ընտանիքի կարեւորագույն գործառույթներից է։ Իսկ 1907 թ. հրատարակված ժողովրդական առակների ժողովածուում արծարծվում են տարբեր թեմաներ՝ ընտանիք, ընկերություն, ագահություն, դավաճանություն, պարծենկոտություն, միամտություն եւ

---

[20] Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, *Հոգեւոր ընթրիք. քրիստոնեայ ընտանիքների համար, Վաղարշապատ, 1901, էջ 65։*

[21] ԶՕԿԿԵ, *Կրօնական-բարոյական խորհրդածութիւններ, Վաղարշապատ, 1887, էջ 133։*

[22] Մ. ԳԻՅԵՕ, *Դաստիարակութիւն եւ ժառանգականութիւն, Վաղարշապատ, 1897։*

այլն։ Մասնավորապես՝ «Ծիտիկ ու ծիտվիտիկ» առակում պատմվում է մի ընտանիքի մասին, որտեղ որդին եւ դուստրը չարագործությունների համար պատժում են հանուն երկրորդ կնոջ իր զավակներին զոհաբերելու պատրաստ հորն ու խորթ մորը։ Սա պատմություն է մի ընտանիքի մասին, որտեղ քրոջ հանդեպ եղբայրական սերն անսահման է[23]*։ Այսպիսի օրինակները բազմաթիվ են։*

Այսպիսով՝ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում հրատարակված գրքերում նկատելի քանակ են կազմում ընտանիքի թեմայի արծարծումները։ Այդ հրատարակությունների ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական-ճանաչողական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն։ Գրքերի բովանդակային ուսումնասիրությունից պարզորոշ տեսնում ենք, որ հարյուրամյակների խորքից եկող ամուսնաընտանեկան սովորություններից հրաժարվել-չհրաժարվելու, այն վերափոխումների ենթարկելու շուրջ հանրային քննարկումները մշտապես սուր բնույթ են կրել։ Ուղղակի ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին, ինչպես նաեւ մեր օրերում՝ ԻԱ. դարասկզբին, չափազանց հրատապ խնդիրներ են եւ առավել սրությամբ են դրսեւորվում հանրային քննարկումներում։

РЕЗЮМЕ

На протяжении веков армянская семья была краеугольным камнем общества и родины. В своих произведениях армянские историки, философы и писатели отдавали семье одну из главных ролей. Типография Первопрестольного Святого Эчмиадзина, являющаяся одной из ведущих восточноармянских типографий того времени, в своих публикациях не могла обойти стороной вопрос семьи. Эта тема с обсуждается в значительном количестве книг, изданных здесь в конце XIX — начале XX века.

Исследования этих публикаций имеют как научно-познавательную, так и практическую значимость. В результате контент-анализа становится очевидным, что общественные дебаты о том, стоит ли отказаться от многовековых супружеских и семейных привычек и изменить их, всегда были ожесточенными.

[23] *Կենդանական վէպեր։ Ժողովրդական առակներ, գք. Ա., Վաղարշապատ, 1907, էջ 19։*

В XIX – начале XX века эти проблемы были очень актуальны и обострились в общественных дискуссиях, что происходит и в наши дни.

SUMMARY

The Armenian family has been the cornerstone of society and the homeland for centuries. In their works, Armenian historians, philosophers and writers have assigned one of the primary roles to the family. The printing house of the Mother See of Holy Etchmiadzin, being one of the leading Eastern Armenian printing houses of the time, could not but reflect on the issue of family in its publications. The topic of the family is discussed in a significant number of books published here in the late 19th and early 20th centuries.

The studies of these publications have both scientific-cognitive and practical significance. As a result of content analysis, it becomes clear that the public debate about whether to abandon centuries-old marital and family habits and change them has always been fierce. In the late 19th and early 20th centuries, these problems were very topical and exacerbated in public discussions, as they are today.